Հավելված 2
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ԼՃ պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 4**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «18 տարին լրացած անձանց ցերեկային կենտրոններում խնամքի և սննդի տրամադրման ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 16. Լոռու մարզ - ճաշարան |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2023 - 31.12.2023թթ |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10. 2023 - 31.12.2023թթ. |
| **Ներկայացման օր** | 19.12.2023թ |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2023.12.19
22:13:09 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում Լոռու մարզի Ալավերդի, Սպիտակ և Վանաձոր համայնքներում գործող ճաշարաններում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու և 24 Արցախից տեղահանված անձինք:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը վերահսկել է ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 2 դեպքի վարում (վերափաստագրման կազմակերպում, ընտանեկան նպաստի ստացման կազմակերպում), 27 ուղղորդում դեպի քաղաքապետարան, պոլիկլինիկա, ՄՍԾ և այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող շահառուների համար իրականացվել են խմբային աշխատանքներ՝ միտված շահառուների բացասական հույզերի, խմբում առկա կոնֆլիկտների հաղթահարմանը, սթրեսի կառավարմանը, կանխարգելմանը և հաղթահարմանը: Իրականացվել են սոցիալ-հոգեբանական հետևյալ դասընթացները՝ «Հաղորդակցման, ինքնաճանաչման հմտությունների զարգացում,սեփական զգացմունքների գիտակցում», «Սոցիումի դերը մարդու կյանքում», «Ինչպես կառավարել հույզերը», «Ճգնաժամային իրավիճակներ, հաղթահարման հնարավորությունները», «Ընտանիքի

ուսումնասիրության խնդիրներն և սկզբունքները», «Ինչպես հաղթահարել վիրավորանքը», «Սոցիալական միայնակության ֆենոմենը», «Հասարակությունը եվ տարեցները», «Տարեց հասակի ճգնաժամը. ինչ անել»:

- Ալավերդի համայնքում բժշկական օգնության տրամադրման շրջանակներում բուժքրոջ կողմից իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում, վերջիններիս զարկերակային ճնշման չափում: Բժշկական աջակցության շրջանակներում շարունակաբար իրականացվում է շահառուների առողջական վիճակի վերահսկում՝ բժշկի կողմից նշանակված դեղորայքի ժամանակին ընդունում, զարկերակային ճնշման վերահսկողություն, գլուկոմետրիայի ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ ուղեկցում պոլիկլինիկա, հիվանդանոց, առողջ ապրելակերպ վարելուն ուղղված տեղեկատվության տրամադրում: Բուժքրոջ կողմից իրականացվել են դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Շաքարային դիաբետ», «Անմիզապահություն, գրիպ»:
- Շփման և զբաղվածության կարիք ունեցող շահառուները մինչ ճաշը կամ ճաշից հետո, մնում են կենտրոնում, շփվում միմյանց հետ, ըստ հետաքրքրությունների ձևավորում խմբակներ: Կենտրոններում գործում են երգի, նկարչական, գրական, գոբելենագործության, առողջ ապրելակերպի խմբակներ: Հաշվետու ժամանակահատվածում Լոռու մարզի երեք համայքների ճաշարանների 60 շահառուներ իրենց առօրյան անցկացրել են նմանատիպ խմբակներում:
- Ճաշարանի շահառուների համար կազմակերպվել են հետևյալ միջոցառումները՝ Տարեցների միջազգային օր, «Մի բուռ կարոտ» գրքի շնորհանդես, հանդիպում բանաստեղծ Արմենուհի Սադաղյանի հետ, Ծննդյան օրվա նշում, Ոսկե աշուն կամ բերքի տոն, Ամանորյա միջոցառում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում ֆեյսբուքյան էջում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- ✓ Տարեցների միջազգային օրվան նվիրված ցերեկույթ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/mntpp, http://surl.li/mqpao, http://surl.li/mqpbw, http://surl.li/mqpqt, http://surl.li/mqptb),
- ✓ Ծննդյան օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/mntqa, http://surl.li/mntrp),
- ✓ Հանդիպում բանաստեղծ Արմենուհի Սադաղյանի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/mntrc),
- ✓ Ոսկե աշուն, բերքի տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/nprgq, http://surl.li/nprii, http://surl.li/nprpt),
- ✓ Հարգանքի տուրք 1988թ.-ի երկրաշարժի զոհերի հիշատակին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ohiek),
- ✓ Ամանորյա միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oivhn, http://surl.li/oivii)

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացման ժամանակ խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- ✓ Ճաշարանների համակարգող/սոցիալական աշխատողները յուրաքանչյուր ամիս մասնակցում են ՄՍԾ-ում համակարգող խորհրդի հրավիրած նիստերին, որի ընթացքում բարձրացվում են նաև շահառուներին հուզող տարաբնույթ հարցեր, նմանատիպ հանդիպումները խթան են հանդիսանում արդյունավետ համագործակցության՝ քաղաքի սոցիալ-առողջապահական եւ այլ շահագրգիռ կառույցների հետ:
- ✓ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի հերթական նիստին, ինչպես նաև Վանաձոր համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամություն ունեցող անձանց, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խմբերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովի հերթական նիստին:
- ✓ Աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար Լոռու մարզի բարեգործական ճաշարանի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Էթիկական կոդեքս» և «Անձնական տվյալների պաշտպանություն» թեմաներով դասընթացներին:

կնքված N 1032-11003/23-ԼՃ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 61 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 46 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 24 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 6 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 40 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 54 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (*նշել*) Ազատ ժամանցի կազմակերպում | 30 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մխիթարյան ______________________

«19» __12___2023 թ